ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. ապրիլի 6-ից 10-ը շրջակա միջավայրի նախարարի տեղակալներ Աննա Մազմանյանի և Արամ Մեյմարյանի՝ Պրահա (Չեխիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

   Աննա Մազմանյան

   Արամ Մեյմարյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Պրահա (Չեխիայի Հանրապետություն)
   2022թ. ապրիլի 6-ից 10-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ԵՄ Թվինինգ ծրագիր

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն «Կենսաբազմազանության հզորացված պաշտպանություն և կայուն օգտագործում Հայաստանում Եվրոպական միության չափանիշներին համապատասխան» ճանաչողական այցին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

- Շրջակա միջավայրում հայ-չեխական հարաբերությունների օրակարգային, այդ թվում՝ համագործակցության հետագա զարգացմանն առնչվող մի շարք հարցեր,
- փորձի փոխանակում բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոզբոսաշրջության մատուցվող ծառայությունների փաթեթային առաջարկների և էկոկրթական բաղադրիչի շուրջ,
- բնության պահպանության ոլորտում ունեցած գիտելիքների և փորձառության փոխանակում,
- հայկական կողմին է ներկայացվել գործակալության գործունեությունը, կառուցվածքը, նախարարության և շրջակա միջավայրի կառավարման քաղաքականությունը մշակող ստորաբաժանումների հետ կապը և գործունեության ֆինանսական պլանավորումն ու անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման եղանակները:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Տեղի են ունեցել հանդիպումներ Չեխիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Աշոտ Հովակիմյանի, Չեխիայի Հանրապետության շրջակա միջավայրի փոխնախարարներ Տոմաշ Տեսարի և Էվա Վոլֆովայի հետ:

Տեղի են ունեցել հանդիպումներ նաև Չեխիայի Հանրապետության Բնության պահպանության գործակալության տնօրեն Ֆրանտիշեկ Պելցի, Բնության հատուկ պահպանության բաժնի ղեկավար Դեյվիդ Լաչինայի և արտաքին կապերի բաժնի ղեկավար Թոմաշ Ռուզիչկայի հետ:

Քննարկվել են բնական պաշարների և պահպանվող տարածքների արդյունավետ կառավարմանը, հարակից գյուղական համայնքներում բնության վրա ճնշումը մեղմող և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը նպաստող ծրագրերի կյանքի կոչման հնարավորությունները:

Քննարկվել են նաև անտառային ոլորտում առկա խնդիրները, ինչպես նաև մարդ-վայրի բնություն կոնֆլիկտի լուծումը չեխական եղանակներով, մասնավորապես անդրադարձ է կատարվել անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ արդյունավետ պայքարի մեթոդներին:

Այցի օրակարգում նախարարի տեղակալները այցելել են «Չեխական դրախտ» բնության հատուկ պահպանվող տարածք և «Կրկնոշե» ազգային պարկ, որտեղ շրջայցի ընթացքում ծանոթացել են տարածքի պահպանության և արդյունավետ կառավարման մեխանիզմներին և անհրաժեշտ մասնագետներ ներգրավելու եղանակներին:

Չեխիայի Հանրապետության Բնության պահպանության գործակալության ներկայացուցիչները նախարարի տեղակալներին ներկայացրել են բնության պահպանության ոլորտում իրենց ունեցած գիտելիքները և իրականացրել փորձի փոխանակում:

Փորձի փոխանակում է իրականացվել նաև բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոզբոսաշրջություն մատուցվող ծառայությունների փաթեթային առաջարկների և էկոկրթական բաղադրիչի շուրջ:

Այցի ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերությունների խորացմանը նպաստող հաջորդ քայլերը:

Քննարկվել են նաև Հայաստանի ճանաչելիությունը բարձրացնելուն ուղղված համատեղ միջոցառումների իրականացումը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Այցի ժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն երկկողմ հարաբերություների խորացմանը նպաստող քայլերի իրականացման վերաբերյալ: Քանի որ Չեխիայի Հանրապետության Կրկնոշե ազգային պարկը և Դիլիջան ազգային պարկը ճանաչվել են քույր պարկեր, քննարկվել է նաև կազմակերպել Կրկնոշե պարկի ներկայացուցիչների այցը Հայաստան էկոկրթություն և կենսաբազմազանության մոնիթորինգի փորձի փոխանակման նպատակով:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման ավարտին կողմերը հույս են հայտնել, որ այս այցը մեծ խթան կհանդիսանա ոչ միայն Թվինինգի հետ կապված հետագա համագործակցության ընդլայնման առումով, այլ նաև այն համաձայնագրերի, հուշագրի, որոնք արդեն իսկ կնքվել են երկու երկրների և գերատեսչությունների միջև:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Աննա Մազմանյան

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Արամ Մեյմարյան

13.04.2022թ.